



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Նոյեմբերի 11, 2021

Ամերիկյան դեսպանատունը, ՀՀ ԿԳՄՍՆ-ն ու ՔՈԱՖ-ը բարելավում են անգլերենի կրթության որակը Լոռու մարզում

ԵՐԵՎԱՆ — Նոյեմբերի 13-ին ՔՈԱՖ-ի անգլերենի «Աքսես» ծրագրի ավարտական միջոցառմանը **Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը, Հայաստանում Ամերիկայի դեսպան Լին Մ. Թրեյսին և ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Ժաննա Անդրեասյանը** կատորագրեն եռամյա փոխըմբռնման հուշագիր՝ ուղղված «**Անգլախոս գյուղական դպրոցներ**» պիլոտային նախաձեռնության տարածմանը:

Նախաձեռնության նպատակը անգլերենի ուսուցումը Հայաստանի Լոռու մարզի 22 գյուղական համայնքների 24 դպրոցներում խրախուսելն ու տարածելն է: Ընդհանրություններ ունենալով ՔՈԱՖ-ի ներկայիս անգլերենի «Աքսես» ծրագրի հետ՝ այս նոր համագործակցությունը անգլերենի կրթության ոլորտում կողմերի ներկայիս ջանքերը կընդլայնի արտադպրոցական ծրագրերի շրջանակներից դուրս:

Հայաստանում անգլերենի իմացությունը զարգացնելը առանցքային նշանակություն ունի տեղական և միջազգային շուկաներում մրցունակ լինելու ու աշխատաշուկայում տեղ գտնելու համար:

Բիզնեսի համաշխարհային լեզուն տարածելով և մշակութային բազմազանություն բերելով Հայաստանի ամենաանտեսված համայնքներին՝ ՔՈԱՖ-ն ու ԱՄՆ դեսպանատունը սերտորեն համագործակցել են վերջին 10 տարիների ընթացքում և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ խթանելու անգլերենի իմացությունը: Մասնակից ուսանողների թիվը 100-ից հասել է 1000-ի:

Կրթության նախարարության հետ նոր համագործակցությունը կընդլայնի նախաձեռնության աշխարհագրական շրջանակը՝ օգնելու ավելի քան 2,400 ուսանողների ձեռք բերել անգլերենի իմացության C1 մակարդակ: Միաժամանակ, ուսուցիչների որակավորումը բարձրացնելու, անգլերենի իմացությունն ու մասնագիտական հմտությունները բարելավելու համար 24 տեղացի ուսուցիչներ կմասնակցեն Հայաստանի ամերիկյան համալսարանի «Անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման» (CTEFL) ծրագրին:



CHILDREN
OF ARMENIA
FUND

Դասավանդման ժամանակակից մեթոդներին զուգահեռ՝ որակավորման բարձրացման շնորհիվ ուսուցիչները ԿԳՄՍ նախարարության կողմից կստանան հնգամյա հավատարմագրում, որն էլ կհանգեցնի նախարարության կողմից տրվող աշխատավարձի մոտ 40%-ով բարձրացման:

Միջոցառման օրը անգլերենի «Աքսես» ծրագրի ավելի քան 300 մասնակիցներ կավարտեն ծրագիրը՝ ճանապարհ հարթելով հաջորդ սերնդի մասնակիցների համար:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: